

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. սեպտեմբերի 11-ի արտահերթ

նիստի /արձ.2/

1. Ինստիտուտի ուսումնական ստորաբաժանումների աշխատանքները համակարգելու նպատակով հաստատել և ս.թ. սեպտեմբեր ամսից գործողության մեջ դնել՝
 - 1.1 Հեռակա ֆակուլտետի կանոնադրությունը,
 - 1.2 Հեռակա ֆակուլտետի մեթոդխորհրդի կանոնակարգը,
 - 1.3 Արվեստի պատմության և տեսության ամբիոնի կանոնադրությունը,
 - 1.4 Հումանիտար գիտությունների ամբիոնի կանոնադրությունը,
 - 1.5 Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության ամբիոնի կանոնադրություն
 - 1.6 Կինոյի և հեռուստատեսության ամբիոնի կանոնադրությունը,
 - 1.7 Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնի կանոնադրությունը,
2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2176-Ն որոշմամբ հաստատված «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրության 22-րդ և 31-րդ կետերով՝
 - 2.1 հաստատել «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կառուցվածքը /Հավելված 1/, հաստիքացուցակը /Հավելված 2/ և աշխատողների պաշտոնային դրույքաչափերը /Հավելված 3/,
 - 2.2. ուսումնական տարվա ընթացքում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածության փոփոխությամբ պայմանավորված աշխատավարձի փոփոխությունը պաշտոնային դրույքաչափերում փոփոխություն կատարելու հիմք չէ:

Նշված փոփոխությունը կատարվում է աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերով կամ համաձայնագրերով,
 - 2.3. անհրաժեշտության դեպքում ժամանակավոր աշխատանքային պայմանագրերով կարող են աշխատանքի ընդունվել աշխատողներ, ովքեր հաստիքացուցակում ընդգրկված չեն,
 - 2.4. սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 01.02.2015 թվականին հաստատված «Երևանի Թատրոնի և Կինոյի Պետական Ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ,

2.5. սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի սեպտեմբերի 1-ից:

3. ԵԹԿՊԻ-ում՝

3.1 բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ներքոհիշյալ մասնագիտությունների ուսման տարեկան վարձը սահմանել հետևյալ չափերով՝

1. 070300 Ռեժիսուրա -400 000 (չորս հարյուր հազար) դրամ
2. 070400 Թատերագիտություն -320 000 (երեք հարյուր քսան հազար) դրամ
3. 071200 Գրական ստեղծագործություն -320 000 (երեք հարյուր քսան հազար) դրամ
4. 072500 Կինոգիտություն - 320 000 (երեք հարյուր քսան հազար) դրամ

3.2. մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ներքոհիշյալ մասնագիտությունների ուսման տարեկան վարձը սահմանել հետևյալ չափերով՝

1. 070300 Ռեժիսուրա -480 000 (չորս հարյուր ութսուն հազար) դրամ
2. 070400 Թատերագիտություն -360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) դրամ
3. 071300 Կինոարվեստ - 480 000 (չորս հարյուր ութսուն հազար) դրամ
4. 072500 Կինոգիտություն - 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) դրամ

3.3. 2015-2016 ուս. տարվանից ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ներքոհիշյալ մասնագիտությունների ուսման տարեկան վարձը սահմանել հետևյալ չափով՝

1. 071300 Կինոարվեստ - 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ
2. 071700 Սոցիալ-մշակութային գործունեություն -250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ
3. 070600 Պարարվեստ - 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ

4. ԵԹԿՊԻ-ի Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնի վարիչ Դավիթ Յուրիի Մինասյանի հեղինակած Սոս Սարգսյանի արձանը ներկայացնել ՀՀ պետական մրցանակի: